

ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄԻ ԿՆԻՔՆԵՐ

Հայտնի է, որ հին և միջին դարերում դրամներ-
ընթացիկներով էին երկու եղանակով. դրամաձևի,
որն ալվելի ընդունելի էր ու տարածված, և ձուլ-
ման: Դրամաձևի կատարվում էր նախօրոք պատ-
րաստված կնիքներով, որոնց վրա փորագրված
էին դրամի առաջին և երկրորդ երեսների հակա-
ռակ պատկերատիպերը: Կնիքների միջև դրվում
էր մետաղյա կլորակը, և մուրճի հարվածով փո-
րագրված պատկերները վերարտադրվում էին կլո-
րակի երկու երեսների վրա: Դեռևս հնագույն ժա-
մանակներից դրամահատության այս պարզ եղա-
նակը գրեթե անփոփոխ պահպանվեց մինչև
XVI դ. կեսերը: Սակայն դրամաձևի վերաբերյալ
շատ մանրամասնություններ տակավին բացա-
հայտված չեն: Անտիկ և միջնադարյան դրամների
կնիքները շատ քիչ են պահպանվել: Ինչ վերաբե-
րում է հայկական դրամների կնիքներին, ապա
այդպիսիք մինչև օրս հրատարակված չեն: Այս
առումով ստորև ներկայացվող կիլիկյան հայ-
կական դրամի կնիքները հայ դրամագիտության
բացառիկ օրինակներ են:

Դրամի առաջին երեսի կնիքը 70 մմ բարձրու-
թյամբ մի «դնդան» է (նկ. 1), որը վերևի մա-
սում գրեթե կլոր է, իսկ դեպի ներքև նեղանալով
դառնում է հավասարակող քառանկյունի (կողմի
երկարությունը՝ 40 մմ): Կնիքի վերևի դաշտի
կենտրոնում, կլոր փոսիկի մեջ փորագրված է
դրամի առաջին երեսի հակառակ պատկերը (փո-
սիկի տրամագիծը՝ 23 մմ, խորությունը՝ 7 մմ):
Վերևի կնիքը 90 մմ երկարությամբ գլանաձև
ձող է, որի մի ճակատի վրա փորագրված է դրա-
մի երկրորդ երեսի հակառակ պատկերատիպը
(տրամագիծը՝ 22 մմ): Ձողի վերևի ճակատի
մուրճի հարվածներից որոշ չափով ձևափոխվել
է և լայնացել:

Ինչպես անտիկ շրջանում, այնպես էլ միջնա-
դարում դրամների կնիքները պատրաստում էին
երկաթից կամ բրոնզից: Կնիքների կրկնվող ման-
րամասների պատկերման համար օգտագործում
էին պոնսոններ: Ներկայացվող կնիքները երկա-

թից են և դրանց վրա հստակ երևում են պոն-
սոնների հետքերը: Հատկապես օգտագործվել է
կետավոր պոնսոնը, որի շնորհիվ կնիքների վրա
սեղմված են ոչ միայն կետավոր շրջանակներ,
այլև պատկերների որոշ մանրամասներ՝ առյու-
ծի գլուխը և պոչը, թաղուհու և թագավորի
զգեստները և այլն:



նկ. 1.

Հնագույն դրամների առաջին երեսը, ինչպես
հայտնի է, մշտապես փորագրվում էր ներքևի ան-
շարժ կնիքի վրա, քանի որ դրամների առաջին
երեսների վրա զրվազրվում էին աստվածների,
տիրակալների պատկերները, որոնք համեմատա-
բար ալվելի բարձրագիւր էին: Դրանով վերացվում
էր կնիքների անկայունությունը, մետաղի կլո-
րակի վրայից սահելու վտանգը: Ներկայացվող
կնիքները մեկ անգամ ևս հաստատում են այդ ի-
րողությունը: Այստեղ ևս փորագրող վարպետը
կնիքների վրա պահպանել է վերոհիշյալ, գուցե և
կանոն դարձած կարգը: Բայց պետք է ենթադրել,
որ փորագրիչները առաջին երեսի պատկերատի-
պերին առավել մեծ պատասխանատվությամբ էին
մոտենում:

1 Կնիքները Հայաստանի պատմության պե-
տական թանգարանին նվիրել է այժմ հանգուցյալ
Նվարդ Գափամաշյանը (Փարիզ), 1970 թ. (դրա-
մագիտության բաժին, գույքամատյան № 18346):

հասած ոչ մեծ քանակությամբ կնիքները վկայում են, որ շնայած օրենքի սահմանած պատիժներին ու խստություններին, այնուամենայնիվ դրամահատարաններից կնիքներ դուրս էին բերվում: Հայտնի չեն նաև ներկայացվող կնիքների հայտնաբերման ստույգ մանրամասները:

Հայկական այս կնիքները ուշագրավ են նաև իրենց պատկերատիպի նորությամբ: Վերևի կնիքի վրա փորագրված առյուծը քայլում է դեպի ձախ, մինչդեռ հրատարակված հարյուրավոր դրամաների օրինակների վրա առյուծը պատկերված է դեպի աջ քայլող⁵: Հետևաբար, այս կնիքներով գրվագվել են Զարեկ-Հեթումի դրամների այն-

պիսի օրինակներ, որոնք այդ շարքը լրացնում են նոր տարբերակով:

Ներկայացվող հայատառ կնիքները մեծ նշանակություն ունեն ինչպես Կիլիկիայի դրամահատության ուսումնասիրման, այնպես էլ միջնադարյան դրամագործության առանձին հարցերի պարզաբանման համար:

ՄԱՐԳՈ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ԶԵՆՐԻ ՍԱՐԳՍՅԱՆ

6 հ. Մուշեղյանը իր «Դրամական շրջանառությունը Հայաստանում (մ. թ. ա. V դ.— մ. թ. XIV դ.)» գրքում (Երևան, 1983) սխալմամբ հիշյալ կնիքները վերագրել է լեոն I-ի (1198—1219 թթ.) օրոք թողարկված երկառյուծ պատկերագրությամբ միավորներին (տե՛ս նկար 233):

⁵ Զ. Պ տ ու կ յ ա ն, Կիլիկյան Հայաստանի դրամները, Վիեննա, 1963, էջ 67, նաև տախտակներ՝ 22—26: